**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**20.12.2018թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱՁԵՐԱՅԻՆ ՏՊԻՉՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ N « ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք.Երևան « » «դեկտեմբերի» 2018թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ջուլհակյանի, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններն և հիմք ընդունելով 20.12.2018թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-3» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը. կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 3.1 կետում նշված «9 960 000 (ինը միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «10 956 000 (տասը միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ» բառերով:

1.2. Պայմանագրի 3.3 ենթակետում ամրագրված «դեկտեմբերի 20»-ը բառերը փոխարինել «դեկտեմբերի 28»-ը բառերով

1.3. Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ապրանքների մատակարարման ընդհանուր գինը սյունակի 3-րդ չափաբաժնում նշված «9960000» թիվը փոխարինել «10956000» թվով, ինչպես նաև հանել <<ապրանքների մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:>> բառերը:

1.4. Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.5. Պայմանագրի 3-րդ կետը լրացնել 3.2 ենթակետով.

«3.2 Պայմանագրի գնից՝ 10 956 000 (տասը միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ»:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Կոմպմարկետ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 2բ շենք 45բն |
| Հ/Հ՝ 900011192052 | Հ/Հ՝ 1510002106830100 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 02557321 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Գ. Ջուլհակյան |
| _____ | _____ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

POLADYAN KAREN 1911770055

Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2018.12.26 17:22:33 +04'00'

Digitally signed by JULHAKYAN GAGIK 2008550583
Date: 2018.12.25 12:36:05 AMT

Հավելված N 1
«20» դեկտեմբերի 2018թ. կնքված
«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-3» ծածկագրով պայմանագրի
« » «դեկտեմբերի» 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| **հրավերով նախատեսված չափաբաժնի համարը** | **գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)** | **անվանումը** | **դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | |
| | | | **դեկտեմբեր** | **Ընդամենը** |
| 3 | 30232110/505 | Լազերային տպիչներ LaserJet Pro M402dne | 10 956 000 | 10 956 000 |

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ 900011192052
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Կոմպմարկետ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 2բ շենք 45բն
Հ/Հ՝ 1510002106830100
ՀՎՀՀ՝ 02557321
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Գ. Ջուլհակյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

POLADYAN KAREN 1911770055
Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2018.12.26 17:23:01 +04'00'

Digitally signed by JULHAKYAN GAGIK 2008550583
Date: 2018.12.25 12:36:41 AMT